ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

18 մարտի, 2020 N 4

ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. մարտի 16-ի 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով՝

1. Պարետի 2020 թվականի մարտի 17-ի <Համաճարաբանական լարված իրավիճակ ունեցող երկրների (տարածքների) ցանկը և անցակետով թույլատրվող մուտքի առանձնահատուկ դեպքերը սահմանելու մասին> թիվ 1 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   ա. Որոշման 1-ին կետի <բ> ենթակետում <վարորդի > բառերից հետո լրացնել <, ուղևորափոխադրում, բեռնափոխադրում, ռազմական կամ սանիտարական թռիչքներ իրականացնող օդանավերի անձնակազմերի մուտքը,, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության հետ հաղորդակցությունը ժամանակավորապես սահմանափակելու մասին ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 17-ի թիվ 303-Ն որոշման ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի տարածք մուտք գործող անձանց մուտքը՝պայմանով, որ նրանք ՀՀ տարածք մուտք են գործում մինչև 2020 թ. մարտի 18-ի 18:30> բառերով
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 18/03/20 15:07:36 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ.ԱՎԻՆՅԱՆ